

Միրոյ ու բարեկամութեան անարժան է ան, որ կը մոռնայ իր բարեկամին երախտիքը: Կան մարդիկ, որ շատ անգամ մեծամեծ բարերարութիւններ ընդունած են մէկէն, բայց երբ ուրիշ անգամ մը դիպուածով իրենց կամեցածը չեն գտած՝ շատ արագ մոռնալով այդ բոլոր բարիքներն ու երախտիքները՝ արհամարհած են իրենց բարեկամը:

Ճշմարիտ բարեկամ չէ ան, որ կը յորդորէ իր բարեկամը գործակցելու իր հետ՝ ի վնաս ուրիշներուն: Այսպիսին՝ արտաքուստ բարեկամութեան անունը կը կրէ, բայց իրականութեան մէջ թշնամութիւն կը նիւթէ, որովհետեւ գործակից դառնալով իր անօրէնութեանը՝ բարեկամը կը մղէ մեղանջելու:

Բարեկամութիւնը կը ծնի սէրէն: Հարկ չէ, որ սիրեցեալ առարկան մօտը ըլլայ, քանզի կարելի է սիրել նոյնիսկ հեռաւորն ու բացական: Ուստի անոնք, որ տեղի հեռաւորութեան պատճառով կը դադրին իրենց ընկերը սիրելի եւ չեն ջանար անոր բարիք գործել՝ սիրոյ մէջ կատարեալ չեն:

Սրտի ցաւերը կը սաստկանան, երբ մէկու մը վշտին վրայ ուրիշներ կ'ուրախանան: Ցաւերը կը թեթեւան, եթէ ուրիշներ վշտացածին կը կարեկին: Ուստի ով որ իր սրտին մէջ ցաւ ունի, թող թշնամիէն թաքուն պահէ, որպէսզի վերջինս չուրախանայ եւ աւելի տրտմի, սակայն թող յայտնէ բարեկամին՝ որպէսզի անոր վշտակցութեամբ ցաւերը թեթեւան ու մխիթարուի:

Շարունակելի



ՈՊԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Կին մը կը գրէ. «Արդէն երկու տարի կ'ընէ, որ գտեր եմ իմ Փրկիչս: Բայց հաւատքս չ'աւելնար: Կը կարծեմ, որ կախարդութեան մեղքի հետեւանք է: Երիտասարդ ժամանակս գորտնուկներուս համար հմայողներուն եւ խաղաթուղթով բախտ բացողներուն դիմեր եմ»:

Ուրիշ մը կը գրէ. «Ես ինքս ալ կախարդութեամբ կը զբաղէի, եւ ուրիշներուն ալ կը դիմէի՝ որ իմ ապագաս գուշակեն: Այդ ժամանակ կը շահագործէի Սուրբ Երրորդութեան անունը, եւ ձեռքով խաչ կը հանէի: Զեռքիս վրայ ահագին գորտնուկներ կային: Անոնցմէ ձերբազատելու համար «Հայր մերը» կ'ըսէի: Գորտնուկներու թիւին համապատասխան օղակներ կը շինէի թելով եւ կը կապէի, կ'աղօթէի եւ թելով կը թաղէի տան սեմին մօտ: Աղջիկ մը կար, որ գորտնուկներ ունէր: Իրեն ըսեր էին, որ պէտք է երկար թել առնէ, օղակներ ընէ եւ յուղարկաւորներու թափօր տեսնելուն պէս՝ թելը նետէ ճամբուն վրայ, որպէսզի մարդիկ վերայէն անցնին: Հետեւեր էր այդ խորհուրդին եւ ազատած էր անոնցմէ»:

Այս բոլորէն ետք, ինչ եզրակացութեան կրնանք յանգիլ: Առաջին՝ յստակ կը դառնայ, թէ որքան տարածուած է այդ մեղքը: Երկրորդ՝ աշխարհի ամէն կողմերը կը զբաղին այդ բանով: Երրորդ՝ թէ՛ հարուստները եւ թէ՛ աղքատները կը հրապուրուին այդ գործով: ...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՆՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՕ ՃԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 25 ՄԱՐՏ, 2012

ԹԻՒ 13

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 22.34-23.12

Զ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԳԱԼՍՏԵԱՆ

Երբ փարիսեցիները լսեցին՝ թէ Յիսուս Սաղուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնագէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապետ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Միրէ՛ք թու Տէր Աստուածը ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ միտքովդ: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է, Միրէ՛ք ընկերդ քու անձիդ պէս: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարդարէութիւնը»:

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհէք Քրիստոսի՛ խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ս. Հոգիով ներշնչուած՝ զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ. «Տէրը իմ Տիրոջս ըսաւ. - ալ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»: «Արդ, եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուրէն սկսեալ ոեւէ մէկը չէր համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ. «Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէ՛ք եւ կատարեցէ՛ք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ընէր: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեւելու համար կ'ընեն: Իրենց զրպանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք ոեւէ մէկը «վարդապետ» մի՛ կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ոեւէ մէկը «հայր» մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Զեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ



Հայ Եկեղեցին Գրիգոր Լուսավորիչը սուրբ դասած է, իսկ Ընդհանրական Եկեղեցին գայն դասած է մեծ սուրբերու շարքին: Ան կոչուած է «Հայոց Մկրտիչ», «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» (Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներէն ետք):

Գրիգոր Լուսավորիչ Հայոց առաջին եպիսկոպոսապետն է 302 թուականէն ի վեր, եւ նկատուած է համաֆրիստոնէական սուրբ, որուն օտնը կը տօնուի: Ս. Գրիգոր Պարթեւական տունէն էր: Երբ իր հայրը՝ Անակ Պարթեւ, սպաննեց Հայոց Խոսրով թագաւորը, իշխաններու վրէժխնդրութենէն փրկելու համար դայեակները մանուկը Կեսարիա փախցուցին: Հոն շուտով մկրտեցին զինք Գրիգորիոս անունով: Նոյն ֆաղափին մէջ ան ուսանեցաւ ու բարձրագոյն կրթութիւնը ստացաւ: Չափահաս դառնալէ ետք ամուսնացաւ կեսարացի Դաւիթի աղջկան՝ Մարիամի հետ: Երկու գաւակներ (Վրթանէս ու Արիստակէս ապագայ հայոց կաթողիկոսներ՝ Արիստակէս Ա. Պարթեւ եւ Վրթանէս Ա. Պարթեւ) ունենալէ ետք, անոնք իրարմէ կը բաժնուին: Գրիգորը կը մտնէ արքունի ծառայութիւն, իսկ Մարիամը կրտսեր գաւակին հետ կը ֆաշուի կուսանոց, աւագ որդին ինամատարին յանձնելով: Երբ Գրիգորը կը լսէ իր հօր կատարածը, Խոսրով արքայի գաւակին՝ Տրդատ արքայի մօտ ծառայութեան կը մտնէ, առանց ըսելու թէ ո՞վ է ինք: 276-ին, երբ պարսիկներու Վոսաթ թագաւորը կը գրաւէ Հայաստանը, Գրիգոր Պարթեւը՝ Տրդատ Գ. Մեծին հետ կ'ընթաց հոռուական կայսրութիւն: 287-ին տիրանալով իր հօր գահին՝ Տրդատ Գ. Մեծը, իր յաղթանակին առիթով, Եկեղեցաց գաւառի Երիզա աւանին մօտ՝ Անահիտի մեհեանին մէջ գոհութեան օտնախմբութիւն կը կազմակերպէ: Հայոց թագաւորը, Բրիստոնեայ պալատականներուն, որոնց շարքին նաեւ Գրիգոր, կը հրամայէ մասնակցիլ պաշտամունքին եւ երկրպագել Անահիտ աստուածուհիի բագինին: Գրիգոր կը մերժէ առաջարկը: Տրդատ Մեծի հրամանով

գայն կը նետեն մահապարտներուն բանտը՝ Խոր Վիրապ, որ թունաւոր օճերով լեցուն էր, եւ ուրկէ ոչ ոք կրցած էր ազատիլ:

Անոր հրամանով Գրիգոր Պարթեւի բանտարկութեան վերջին տարին՝ 301 թուականին, Սուրբ Հռիփսիմեանց եւ Գայիանեան 37 կոյսերը նահատակուեցան Վաղարշապատ ֆաղափի մօտերը: Ս. Հռիփսիմեանց կոյսերու նահատակութենէն ետք Տրդատ արքան կը պատժուի: Դիւահար թագաւորը վայրի խոզի նման կը դառնայ եւ եղգնուտերու մէջ կը մտնէ: Պատիժէն զերծ մնացած իր ֆոյրը՝ Խոսրովի դուխոր տեսիլք մը կը տեսնէ, որ կը կրկնուի հինգ անգամ, ըստ որուն միայն Գրիգորը կրնար բուժել դիւահար թագաւորը: Խոսրովի դուխորի ինամակալ՝ Օտա Ամատունին, Գրիգորը հանդիսաւոր շուքով Խոր Վիրապէն Վաղարշապատ կը բերէ: Ապա, արքային աղաչանքը տեսնելով, Աստուծմէ ստացած իր գորութեամբ կը բժշկէ Տրդատ Մեծը եւ բոլոր դիւահար պալատականները: Տեսիլքին մէջ Սուրբ Գրիգորին կը յայտնուի կոյսերուն վկայարաններուն վայրը: Դարձի եկած արքան հրաման կու տայ, որ բոլոր ֆրիստոնեաներուն դէմ հալածանքը դադարի եւ ժողովուրդը ազատօրէն պաշտէ Քրիստոսի սուրբ հաւատքը: Եւ այսպիսով, Տրդատ Գ. Մեծը 301 թուականին աշխարհի մէջ առաջին անգամ ըլլալով, ֆրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօնը կը հռչակէ: 302 թուականի սկիզբը, 16 նախարարներու ընկերակցութեամբ եւ թագաւորական հրովարտակով, Գրիգորը Կեսարիա կը մեկնի, ուր Հայոց հայրապետ կը ձեռնադրուի:

6 Յունուար, 303-ին առաւօտեան Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին օրը, Արածանի գետի ակունքին մօտ, Նպատ լեռան ստորոտին, Գրիգոր կը մկրտէ Տրդատ Գ. Մեծը ու ամբողջ արքունի աւագանին: Նոյն տեղը, եօթը օրերու ընթացքին ան կը մկրտէ նաեւ արքունի զօրքն ու ժողովուրդը: 303-ին սկիզբը, արքան ու հայրապետը մայրաքաղաք՝ Վաղարշապատ կը վերադառնան եւ Գրիգոր Լուսավորիչ՝ իր տեսիլքին համաձայն, արքունի գահին մօտ Միածնի իջած վայրին վրան հեթանոսական մեհեանին տեղը կը կառուցէ Էջմիածնի (Էջ Միածնի) Տաճարը, ուր կը հաստատուի Հայոց Առաքելական Աթոռը, իսկ Էջմիածին Տաճարը կը դառնայ հայոց առաջին Եկեղեցին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է եպիսկոպոսութիւնը:
Եպիսկոպոսութիւն կը նշանակէ տեսչութիւն: Որովհետեւ եպիսկոպոսին պաշտօնն է թեմի մը կամ վիճակի մը տեսչութիւն ընել, հսկել եկեղեցիներուն վրայ, բարեկարգ եւ պայծառ պահել զանոնք ամէն կերպով: Եպիսկոպոսին պարտքն ու պաշտօնն է նաեւ իր տեսչութեան ներքեւ գտնուող եկեղեցիներուն պաշտօնեաները պատրաստել դպրոցի մը մէջ եւ ձեռնադրել զանոնք:

Ո՞վ է Կաթողիկոսը:
Կաթողիկոսն է Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանուր եւ Գերագոյն Պետը: Կը կոչուի նաեւ Քահանայապետ, Եպիսկոպոսապետ:

Կաթողիկոսն է, որ կը ձեռնադրէ Եպիսկոպոսը եւ կ'օրհնէ Սրբալոյս Միւռոնը:

Կաթողիկոսն է որ կը լուծէ եւ կը վճռէ Եկեղեցւոյ եւ ամուսնութեան վերաբերեալ ամէն տեսակ դժուարին խնդիրները, կ'ընէ բացառիկ կարգադրութիւններ եւ տնօրէնութիւններ՝ Եկեղեցւոյ պէտքին եւ պարագաներուն համեմատ, իր ազատ կամքով եւ անկախ դատողութեամբ:

Ի՞նչ է կուսակրօնութիւնը:
Կուսակրօն կ'ըսուին այն քահանաները, որոնք չեն ամուսնանար, վանք կը բնակին եւ կը կոչուին արեղայ: Հետեւաբար, կուսակրօնութիւնը կը նշանակէ կոյս մնալու կամ չամուսնանալու սովորութիւն:

Փոքր աստիճան ունեցողներ կրնան ամուսնանալ մինչեւ քահանայութիւն իսկ անոնք որ վանական կեանքի նուիրուած են, չեն ամուսնանար:

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԵԹԷ ԱՇԽԱՐՀԻ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ ՔԵՉ ԿՐ ՎԱՍՏՆԷ, ԿԱՐԳԱՄ 27ԲԳ ՍԱՂՄՈՍԸ

ԱՂՕԹՔ ԵՒ ՕՐՅՆԵՐԳ ԱՍՏՈՒԾՈՅ

Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես. Տէրն է կեանքիս ապաւէնը, որմէ՞ պիտի դողամ ես:

Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած՝ զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրենք սկաւաքացան եւ ինկան:

Նոյնիսկ եթէ ամբողջ բանակ մը վերաս յարձակի, սիրտս վախ պիտի չըզգայ. նոյնիսկ եթէ ինձի դէմ նակատամարտ յարդարուի՝ դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ:

Մէկ բան ինդրեցի Տիրոջմէ, եւ սա՛ է աղաչանքս. Կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ տան մէջ բնակիլ, ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զի՛նք պաշտել իր տաճարին մէջ:

Ներութեան ժամանակ իր յարկին տակ պիտի պահէ զիս, իր տաճարը զիս պիտի պատսպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս:

Եւ հիմա գրուիս բարձր պիտի կանգնիմ զիս շրջապատող թշնամիներու դէմ, եւ ուրախ աղաղակով գոհեք պիտի մատուցանեմ Տիրոջ տաճարին մէջ, պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:

Ո՞վ Տէր, լսէ՛ աղաչանքս, երբ ֆեղօգնութեան կը կանչեմ, ողորմէ՛ ինձի եւ պատասխան տո՛ւր:

«Զի՛ս փնտոնեցէ՛ք», ըսիր դուն, եւ իմ սիրտս ֆեղի պատասխան տուաւ. «Քե՛զ կը փնտոնեմ, Տէ՛ր»:

Ինձմէ երես մի՛ դարձներ, բարկութեանդ մէջ մի՛ հեռանար ինձմէ՛ ծառայէդ:

Շարունակե՛նք սաղմոսագիրքէն...

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
66.1-24**

Տէրը այսպէս կ'ըսէ.-

«Երկիրն էր իմ աթոռս է եւ երկիրը՝ ոտ-
ֆերուս պատուանդանը: Ի՞նչպէս տուն
պիտի շինէ՞ք ինծի համար, կամ ո՞ւր պի-
տի ըլլայ իմ հանգստավայրս. որովհետեւ
երկիրն է ու երկիրը ե՛ս ստեղծեք եմ եւ
իմս եմ,- կ'ըսէ Տէրը: Սակայն ես պիտի
բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է եւ փաղցր, եւ
երկիրն ածուրթեամբ կը հնազանդի իմ
խօսքերուս:

Գալով անօրէն մարդուն, անոր՝ ինծի
եզ գոհելը մարդասպանութեան համագօր
է, ոչխար գոհելը՝ շուն մորթելու, նաշիհ
մատուցանելը՝ խոզի արիւն ընծայելու,
եւ իմ անունիս կնդրուկ ծխելը՝ ինծի
հայհոյելու, որովհետեւ իրենք իրենց
ցանկութիւնները կատարեցին եւ հոգիով
իրենց գարշելի կուտֆերուն փարեցան:

Ուստի ես ալ հրապարակաւ պիտի խայ-
տառակեմ գիրենք եւ իրենց մեղքերուն
փոխարէնը պիտի հատուցանեմ իրենց.
որովհետեւ կանչեցի գիրենք եւ չլսեցին
գես, խօսեցայ եւ մտիկ չըրին, եւ ըրին
այն ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցին
այն ինչ որ կամֆիս հակառակ է»:

Լսեցէ՛ք Տիրոջ պատգամը, ո՛վ աստուա-
ծավախներ. ձեզ ատող եւ ձեզ գգուելի
համարողներուն ըսէ՛ք, ո՛վ եղբայրներ,
թէ Տիրոջ անունը պիտի փառաւորուի եւ
այդ փառքը ձեր ուրախութեան մէջ պիտի
արտացոլայ, իսկ իրենք ամօթով պիտի
մնան: Ահա փաղաքէն աղաղակ մը կը
լսուի, ձայն մը՝ որ տաճարէն կու գայ:
Տիրոջ ձայնն է, որ իրեն հակառա-
կողներուն հատուցանելիք պատիժը կը
վնէ:

Կարելի՞ քան է որ կին մը հագիւ
յղացած՝ ծնի, որ երկունքի ցաւ չքաշէ եւ
առանց երկունքի արու գաւակ մը ծնի:

**Շարունակել ընթերցել Աստուածա-
շունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐՈՒՆ**

2.8- -3.17

Զգոյշ եղէ՛ք, որ ոեւէ մէկը ձեր
միտքը չգրաւէ իմաստասիրական
տեսութիւններով եւ խաբեբայական
սին խօսքերով, որոնք մարդկային
աւանդութիւններու եւ բնութեան
ոյժերուն վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ
Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վար-
դապետութեան վրայ: Որովհետեւ
մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի
աստուածային բնութեան ամբողջ
լիութիւնը: Եւ դուք ձեր կեանքին
լիութիւնը գտաք միանալով անոր, որ
գլուխն է ոգեղէն աշխարհի բոլոր
իշխանութիւններուն ու պետու-
թիւններուն: Հաւատքի ճամբով երբ
Քրիստոսի միացաք, դուք ձեր մեղ-
քերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլ-
փատութեամբ ստացած եղաք սրտի
թրփատութիւնը: Մկրտուելով անոր
հետ միասին թաղուեցաք, եւ անոր
հետ ալ յարութիւն առիք, քանի հաւա-
տացիք Աստուծոյ զօրութեան, որ
զայն մեռելներէն յարուցանեց: Քրիս-
տոսի հետ Աստուած ձեզ ալ կենդա-
նացուց, քանի դուք հոգեւորապէս
մեռած էիք ձեր մեղքերուն պատ-
ճառով, որովհետեւ անթրփատ հեթա-
նոսներ էիք: Այո, Աստուած ներեց մեր
բոլոր յանցանքները եւ իր իշխա-
նութեամբ ջնջեց մեր օրինազան-
ցութեան համար մեզի դէմ արձա-
կուած դատապարտութեան վճիռը,
զայն խաչափայտին գամելով: Այսպի-
սով անիկա գինաթափ ըրաւ ոգեղէն
աշխարհի իշխանութիւններն ու
պետութիւնները, յայտնապէս խայ-
տարակելով ու պարտութեան մատնե-
լով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր
յարութեան ատեն:

Կարեւորութիւն մի՛ տաք անոնց
որոնք ձեզ կը քննադատեն թէ ինչո՞ւ
չէք պահեր ուտելու եւ խմելու,
տօնակատարութեանց, ամսամու-
տերու եւ Շաբաթ օրերու վերա-
բերող կանոնները. որովհետեւ այդ
բոլորը գալիք իրականութեանց
շուքն էին, իսկ իրականութիւնը
Քրիստոսի մէջ է:

**Շարունակել ընթերցել Աւետարա-
նէն (Նոր Կտակարան)**